ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 55-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի թվով 8-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2.Վայք համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
3.Վայք համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
4.Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 1-ին նրբանցք, թիվ 3 հասցեի հարակից տարածքում գտնվող ուռենին հատելուն թույլտվություն տալու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
5.Վայք համայնքի Վայք քաղաքի Ա.Թովմասյան 4 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող մանկապարտեզի շենքը «Վայք համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին անհատույց հատկացնելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
6.Վայք համայնքի Վայք քաղաքի Ալավերդյան 54 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող մանկապարտեզի շենքը «Վայք համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին անհատույց հատկացնելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
7.Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի 7-րդ փողոց, 14 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող մանկապարտեզի շենքը «Զառիթափի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին անհատույց հատկացնելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
8.Վայք համայնքի Վայք քաղաքի Վ.Սարգսյան 2/2 հասցեում էլեկտրական ենթակայան տեղադրելու համար 60 քմ հողատարածք հատկացնելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:

9.Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող 0.0584 հա մակերեսով,10-003-0011-0073 կադաստրային ծածկագրով հողատեսքը համայնքային սեփականություն ճանաչելու և կադաստրային քարտեզում ուղղում կատարելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
10.Վայք համայնքի Վայք քաղաքի Շինարարների փ. 1-ին նրբանցք թիվ 3 հասցեում գտնվող 0.25162 հա մակերեսով համայնքային սեփականության հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
11.Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ.45/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականության հողամասը աճուրդային եղանակով օտարելու, վաճառքի մեկնարկային գինն ու պայմանները սահմանելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
12.Վայք համայնքի Փոռ բնակավայրում գտնվող 0,046 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
13.Վայք համայնքի Զառիթափ բնակավայրում գտնվող 0.71225 հա մակերեսով պետական սեփականության հողամասը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու, ամսական վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
14.Դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
15.Վայք համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ -8 Դեմ -1 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՀԱՅԿ

ԱՍԼԱՆՅԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ

ԱՐԱՄՅԱՆ ԱՆՈՒՇ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՍՏՂԻԿ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ ՀՐԱՉԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 56-Ն

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետի և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները (կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա, մերսման սրահ) կարող են տեղակայվել բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից նվազագույնը 500 մետր հեռավորության վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

Հավելված 1
Վայք համայնքի ավագանու
12.09.2023 թվականի
թիվ 56-Ա որոշման

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

«Վայք համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Վայք համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետի և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.3-րդ հոդվածի հիման վրա:

Վերոգրյալ կարգավորումներից պարզ է դառնում, որ համայնքի ավագանին պետք է որոշի համայնքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա, մերսման սրահ) տեղակայումը որ վայրերում է արգելվում, ինչպես նաև պետք է սահմանի սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների հեռավորությանը որոշակի հաստատություններից:

Նախագծով առաջարկվում է Վայք համայնքի տարածքում արգելել սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայումը բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքում, կրթական և պատմամշակութային հաստատությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի, բժշկական հաստատությունների տարածքներում: Ինչպես նաև առաջարկվում է սահմանել, որ սահմանափակման ենթակա կարող են գտնվել կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և սոցիալական կազմակերպություններից, հիմնարկներից, հաստատություններից, բազմաբնակարան շենքերից, անհատական բնակելի տներից, հանրային սննդի օբյեկտներից, հյուրանոցներից, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, զբոսայգիներից, այգիներից, պուրակներից, հանգստի կամ ժամանցի համար նախատեսված այլ վայրերից նվազագույնը 500 մետր հեռավորության վրա:

2. Իրավական ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

«Վայք համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին» ավագանու որոշման նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջների սահմանման և պահպանման հետ կապված հարաբերությունները:

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Վայք համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Վայք համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Վայք համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Վայք համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 57-Ն

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-ին կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

Հավելված 1
Վայք համայնքի ավագանու
12.09.2023 թվականի
թիվ 57-Ա որոշման

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

«Վայք համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին» Վայք համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-ին կետի պահանջների կատարումով:

Վերոգրյալ կարգավորումներից պարզ է դառնում, որ տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված են լիազորություններ, որոնք ուղղված են համայնքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման հետ կապված հարաբերությունների կարգավորմանը: Հիշյալ լիազորություններից է մասնավորապես՝ տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու իրավասությունը, որը վերապահված է համայնքի ավագանուն:

Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման հետ կապված հարցերը կարգավորված են «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքով, ինչպես նաև ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով:

«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հրավառությունը՝ հրագործական նյութի (արտադրանքի) և հրագործական բաղադրիչի ծրագրված կիրառումն է, որը կարող է վտանգել մարդու կյանքը, առողջությունը և վնասներ պատճառել շրջակա միջավայրին ու գույքին:

Նույն օրենքով սահմանված է նաև տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության հասկացությունը, այն է՝ տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունները՝ հրավառություններ են, որոնց հետ վարվելը պահանջում է հատուկ գիտելիքներ և հմտություն, կատարողների (օգտագործողների) համապատասխան որակավորում և (կամ) տեխնիկական սարքավորման որոշակի պայմանների ապահովում: Նույն հոդվածում ամրագրված կարգավորումների համաձայն՝ տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների չափորոշիչները, ինչպես նաև տեխնիկական անվտանգության ոլորտում տեխնիկական անվտանգության նորմերը, կանոնները և հրահանգները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 845-Ն որոշմամբ սահմանվել են տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների չափորոշիչները, իսկ «Հրդեհային անվտանգության մասին» օրենքի հիման վրա համապատասխան իրավասու մարմինների կողմից մշակվել և գործողության մեջ են դրվել մի շարք իրավական ակտեր, որոնք վերաբերվում են հրդեհային անվտանգության կանոնների հաստատմանը: Վերջիններիս համաձայն՝ հատուկ նշանակության հրագործական արտադրատեսակների օգտագործումը, հետևաբար նաև՝ տեխնիկական և հատուկ նշանակության հրավառությունների իրականացումը չի թույլատրվում՝ ցանկացած տեսակի շենքերում, շինություններում և կառույցներում,

պայթյունահրդեհավտանգ օբյեկտների տարածքներում, գազատար և նավթատար խողովակաշարերի, ինչպես նաև բարձր լարման էլեկտրահաղորդալարերի մոտակա տարածքներում, տանիքներում, պատշգամբներում, շենքերի ճակատների ելուստային մասերում, բեմահարթակներում, մարզադաշտերում, մարզական կառույցներում, կամուրջների վրա, ճամփաբաժաններին, տրանսպորտային մայրուղիներում, երկաթգծի հանգույցներում, հակահրդեհային անբավարար վիճակում գտնվող տարածքներում, ցույցերի և քայլերթերի ժամանակ: Հրագործական արտադրատեսակների օգտագործումից առաջ հարկավոր է՝ նախապես որոշել (ընտրել) հրավառություն անցկացնելու վայրը, տարածքի չափերը պետք է համապատասխանեն արտադրատեսակի վրա նշված վտանգավոր տարածքի առավելագույն չափերին, տարածքում չպետք է լինեն ծառեր, էլեկտրահաղորդման լարեր և այլ օդային արգելքներ: Կարևորելով բնակչության անվտանգության ապահովման առաջնահերթ խնդիրը, հրդեհների և տեխնածին վթարների կանխարգելումը՝ դրանց ծանր հետևանքներից խուսափելու, ինչպես նաև քաղաքացիների բնականոն կյանքի, անդորրի պահպանման կարևորությունը, անհրաժեշտություն է առաջացել հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-ին կետում ամրագրված կարգավորումը՝ ընդունել հիշյալ իրավական ակտը:

2. Իրավական ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը

Նախագիծը կրում է նորմատիվ բնույթ, քանի որ պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ համայնքի վարչական տարածքում անորոշ թվով անձանց համար և ուղղված է կարգավորելու Վայք համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման հետ կապված հարաբերությունները:

ՏԵՂԵԿԱՆՔ N 1

«ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Վայք համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին» Վայք համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ N 2

«ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Վայք համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին» Վայք համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

Հավելված 2
Վայք համայնքի ավագանու
2023 թվականի սեպտեմբերի 12-ի
թիվ 57-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի (այսուհետ՝ համայնք) տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն թույլատրվում է իրականացնել համայնքի բնակավայրերի հրապարակներում, զբոսայգիներում և հարակից տարածքներում:

2. Տեխնիկական և հատուկ նշանակության հրագործական արտադրատեսակների օգտագործումը չի թույլատրվում ցանկացած տիպի շենքերում, շինություններում, կառույցներում, պայթունահրդեհավտանգ օբյեկտների տարածքներում, գազատար և նավթատար խողովակաշարերի, ինչպես նաև բարձր լարման էլեկրահաղորդալարերի մոտակա տարածքներում, տանիքներում, պատշգամբներում, բեմահարթակներում, մարզադաշտերում և այլ մարզական կառույցներում, կամուրջների վրա, ճամփաբաժանների, տրանսպորտային մայրուղիներում, երկաթգծի հանգույցներում, ինչպես նաև միտինգների, քայլերթերի և ցույցերի ժամանակ:

3. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության անցկացնելու վայրը որոշվում է նախապես, տարածքի չափերը պետք է համապատասխանեն արտադրատեսակի վրա նշված վտանգավոր տարածքի առավելագույն չափերին, տարածքում չպետք է լինեն ծառեր, էլեկտրահաղորդման լարեր և այլ օդային արգելքներ:

4. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության անցկացնելու վայրի չափերը պետք է համապատասխանեն հրագործական արտադրատեսակների վրա նշված վտանգավոր տարածքի մաքսիմալ չափերին:

5. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելը պահանջում է հատուկ գիտելիքներ և հմտություն, կատարողների (օգտագործողների) համապատասխան որակավորում և (կամ) տեխնիկական սարքավորումների «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 845-Ն որոշմամբ սահմանված պայմանների ապահովում:

6. Չի թույլատրվում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության անցկացումը ուժեղ քամու և անձրևի պայմաններում:

7. Չի թույլատրվում հրագործական արտադրատեսակների օգտագործումը 18 տարեկանը չլրացած անձանց կողմից:

8. Չի թույլատրվում ծխել հրագործական արտադրատեսակների մոտ:

9. Տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության թույլատրելի ժամ սահմանել 9:00-ից մինչև 23:00-ն:

10. Սույն կանոնների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 58-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃ. 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՒՌԵՆԻՆ ՀԱՏԵԼՈՒՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ և 42-րդ կետերի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Թույլատրել հատել Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 1-ին նրբանցք, թիվ 3 հասցեի հարակից տարածքում գտնվող ուռենին, քանի որ թեքված է, ներսի մասը ամբողջությամբ փտած է և գտնվում է ընկնելու վտանգի տակ:

2.Սահմանել հատված ծառի վաճառքի գինը 1խմ-ի համար՝ 18 000(տասնութ հազար) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 59-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԸ «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԱՆԺԱՄԿԵՏ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքի Ա.Թովմասյան 4 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող մանկապարտեզի շենքը՝ 588,61քմ. տարածքով և 0.28764 հա մակերես հողատարածքով, անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ հատկացնել «Վայք համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 60-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ 54 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԸ «ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԱՆԺԱՄԿԵՏ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքի Ալավերդյան 54 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող մանկապարտեզի շենքը՝ 988,4 քմ. տարածքով և 0.31372 հա մակերես հողատարածքով, անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ հատկացնել «Վայք համայնքի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 61-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 7-ՐԴ ՓՈՂՈՑ, 14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԸ «ՁԱՌԻԹԱՓԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ԱՆԺԱՄԿԵՏ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի Ձառիթափ բնակավայրի 7-րդ փողոց, 14 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող մանկապարտեզի շենքը՝ 1041,2քմ. տարածքով և 0.50665 հա մակերես հողատարածքով, անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ հատկացնել «Ձառիթափի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 62-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ 2/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅԱՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ 60 ՔՄ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասով, 75-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշման 44-րդ կետի ը/ ենթակետը՝ և հիմք ընդունելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից 10.05.2023թ-ին ստացված թիվ Պ.Գ.2522 դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն Վայք համայնքի սեփականություն հանդիսացող, Վայք քաղաքի Վ. Սարգսյան 2/2 հասցեում գտնվող 60 քմ մակերեսով հողատարածքը առանց մրցույթի, վարձակալության իրավունքով, 99 (իննսունինը) տարի ժամկետով օգտագործման հատկացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությանը՝ բնակչությանը սպասարկման նպատակով էլեկտրական ենթակայանի տեղադրման համար՝ վարձի չափը սահմանելով տարեկան 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ:
2. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 63-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.0584 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ, 10-003-0011-0073 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը» հաստատելու մասին» N 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի Վայք քաղաքում գտնվող, 0.0584 հա մակերեսով, 10-003-0011-0073 կադաստրային ծածկագրով հողատեսքը, որը համայնքի կադաստրային քարտեզում հաշվառված է որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն և իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունի՝ ճանաչել որպես Վայք համայնքի սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 64-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ Փ. 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,25162 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48[1]-րդ և 76-րդ հոդվածներին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետին համապատասխան՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Վայք համայնքի տարածքում գտնվող համայնքային սեփականություն համարվող Վայք քաղաքի Շինարարների փ. 1-ին նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակությամբ 0,25162 հա մակերեսով հողամասը (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, կադաստրային ծածկագիրը՝ 10-003-0002-0231) մրցույթային եղանակով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման տարեկան վճարի մեկնարկային գինը սահմանել 40 000 (քառասուն հազար) դրամ, ժամկետը՝ 25 (քսանհինգ) տարի, նպատակը՝ բնակելի տուն կառուցելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 65-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՋԵՐՄՈՒԿԻ ԽՃ. 45/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ, ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Համաձայնություն տալ Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 45/2 հասցեում գտնվող 10-003-0010-0012 կադաստրային ծածկագրով, համայնքային սեփականություն (վկայական՝ 19072023-10-0015, գաղտնաբառ՝ 5ZVGYKRU7TMC) հանդիսացող հողամասը (նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, մակերեսը՝ 0,0221 հա) բնակելի կառուցապատման նպատակով աճուրդային եղանակով օտարելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը. հողամասի վաճառքի մեկնարկային գինը սահմանել 41 500 (քառասունմեկ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 66-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՌ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,046 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով , Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով, հիմք ընդունելով նաև ՀՀ Վայոց ձորի մարզպետ Ա.Գրիգորյանի 16.08.2023 թվականի թիվ 01/06-1-1/5626-23 գրությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Վայք համայնքի Փոռ բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն համարվող 0,046 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (հողատեսքը՝ արոտավայր) նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատում) նպատակային նշանակության հողերի:

2. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8 Դեմ -1 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 67-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0,71225 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48-րդ հոդվածներին և 76-րդ հոդվածի 3-րդ մասին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետին և 2010 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին» N 16-Ն որոշման հավելվածի 9-րդ կետին համապատասխան և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 16.08.2023 թվականի թիվ 01/06-1-1/5608 դրական եզրակացությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Վայք համայնքի Ձառիթափ բնակավայրի տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,71225 հա մակերեսով հողամասը (հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-022-0293-0006) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Վայք համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ գյուղատնտեսական գործունեության համար, տարեկան վարձավճարի մեկնարկային չափը՝ 10 000 (տասը հազար) ՀՀ դրամ, հողամասը վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝մինչև 10 (տասը) տարի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 Հեռ. (374281) 2 25 22

„16" 08 2023թ. N 01/0641/5608.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Մ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 14 հունվարի 2010 թվականի << ՀՀ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց /մշտական/ օգտագործման, վարձակալության և կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը հաստատելու մասին >> թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և Ձեր 24.05.2023թ. թիվ 611 գրությունը՝ տալիս եմ դրական եզրակացություն Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.71225հա արոտը, մրցույթային կարգով վարձակալությամբ տրամադրել՝ համաձայն ՀՀ կառավարության 12.04.2001 թվականի թիվ 286 որոշմամբ հաստատված պահանջների:

X

Հարգանքով՝ **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող հողաշինության բաժնի պետ
Մ. Մեսրոպյան
Հեռ. /0281/23713

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 68-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Վայք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Վայք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու հարցերի մշտական հանձնաժողովի թիվ 8 և 9 արձանագրությունները՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Վայք համայնքի 2023 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Վայք համայնքի հետևյալ բնակիչներին՝

.Լալա Արտաշի Մելքոնյան՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ

.Արմեն Կարենի Հակոբյան՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ

.Վալերիկ Սմբատիի Բաբայան՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ

.Լյուդմիլա Միքայելի Արմենակյան՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ

.Անդրանիկ Գագիկի Հախվերդյան՝ 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Որոշման նախագիծը նախապատրաստեց՝
ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023թ.

ՈՐՈՇՈՒՄ N 69-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի հոկտեմբերի 13–ին, ժամը՝ 15:30–ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Որոշման նախագիծը նախապատրաստեց
ԱՆՈՒՇ ՂԱՋԱՐՅԱՆ